

«Էմերալդ ցանց» Հայաստանում.
Առաջընթաց, մարտահրավերներ և ապագա



Dusky large blue/Դասքի լարջ բլուր բնական միջավայրին հարմարված թիթեռ է, պահպանվում է 6-րդ Բանաձևի համաձայն

Լուսանկարը՝ Կարեն Աղաբաբյանի

Անցած մի քանի տասնամյակում Եվրոպայի բազմաթիվ վայրի տեսակների և բնական միջավայրերի պոպուլյացիաները զգալի [նվազել են](#): Մայրցամաքի կենսաբազմազանության պահպանմանն ուղղված գործողություններ չձեռնարկելու դեպքում հավանական է, որ այս միտումը կպահպանվի: Եվ վայրի բնության ու բնական միջավայրերի նման անկումն ի վերջո ազդում է էկոհամակարգի ծառայությունների վրա և վտանգում պարենային ապահովությունը, ջրամատակարարումը և ապրուստի տնտեսական միջոցները:

Հայաստանը, Արևելյան գործընկերության մյուս երկրների հետ մեկտեղ, հատուկ պահպանվող տարածքների «Էմերալդ Ցանց» /Emerald Network միջոցով կենսաբազմազանությունը պահպանելու հանձնառություն է ստանձնել: Ստեղծվելով [«Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրերի պահպանության մասին» Բեռնի 1979 թ. կոնվենցիայի](#) համաձայն՝ իրավաբանորեն ճանաչված և պահպանվող, բարձր կենսաբազմազանությամբ տարածքների «Էմերալդ ցանց» վայրի բնության և դրա բնական միջավայրերի երկարաժամկետ պահպանությունն ապահովելու և մարդկանց և բնության կայուն փոխազդեցությունը խթանելու նպատակ ունի:

Երբ 2006 թ. Հայաստանը ստորագրեց Բեռնի կոնվենցիան, այն համալրեց շուրջ 50 այլ եվրոպական երկրների շարքերը, որոնք հանձն էին առել պաշտպանել մայրցամաքի հարուստ կենսաբազմազանությունը: 2008 թ. -ին կոնվենցիայի ընդունումից ի վեր Հայաստանը 23 տարածք է առանձնացրել «Էմերալդ ցանցում» որպես բնության պահպանության հնարավոր վայր ընդգրկվելու համար: Այս վայրերին ընդհանուր մակերեսը կազմում է երկրի տարածքի ավելի քան մեկ երրորդը՝ համամասնություն, որը մասնակից բոլոր երկրների մեջ ամենամեծերից է և գրեթե երեք անգամ ավելի է, քան ողջ Հարավային Կովկասի տարածաշրջանուն:

ԵՄ ֆինանսավորմամբ [«ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի](#) շրջանակում [Համաշխարհային բանկի խումբը](#) Հայաստանին աջակցում է երկրում հատուկ պահպանվող վայրերի «Էմերալդ ցանցի» ստեղծումն առաջ մղելու հարցում: 2019 թ. մեկնարկից սկսած «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրն աջակցում է Արևելյան գործընկերության երկրներին իրենց բնական կապիտալի պահպանման և մարդկանց համար դրա կայուն օգտագործման շնորհիվ ստացվող օգուտները ավելացնելու հարցում՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններով, իրացնելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և շրջակա միջավայրի ռիսկերի ու ազդեցությունների ավելի լավ կառավարման մեխանիզմների սահմանմամբ:

Հայաստանը, դեպի ծով ելք չունեցող երկիր լինելով, օժտված է հարուստ կենսաբազմազանությամբ, որը բաժանված է կենսաաշխարհագրական երկու գոտիների. հյուսիսում՝ ալպիական, հարավում՝ անատոլիական: Չնայած համեմատաբար փոքր չափին, երկրում բնական միջավայրի լայն բազմազանություն կա՝ նախալեռների կիսանապատայինից բարձր լեռնային վերին շրջանների ալպիական մարգագետիններ:



*«Զանգեզուր» Էմերալդ վայրի ալպիական մարգագետինները
Լուսանկարը՝ Կարեն Աղաբաբյանի*

Բնական միջավայրերի նման բազմազանությունը կաթնասունների, թռչունների, սողունների, միջատների և բույսերի լայն տեսականու բնօրրանն է, որոնք հարմարված են ապրելու շոգ կիսաանապատերում, խոնավ անտառներում, աղի ճահիճներում կամ բարձր-լեռնային ապարների և մանրախճի վրա:



Եգիպտական անգղեր քարանձավի բնում. 6-րդ բանաձևի համաձայն պահպանվող տեսակ է Լուսանկարը՝ Կարեն Աղաբաբյանի

Երկրի հարուստ կենսաբազմազանությունը լավ փաստագրված է և մարդկանց առաջացրած սպառնալիքների պատճառով՝ բազմաթիվ տեսակներ ու բնական միջավայրեր պահպանվում են Կոնվենցիայի շրջանակում (տե՛ս ստորև բերված աղյուսակը):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԸ

Կենսաաշխարհագրական գոտի	Բնական միջավայրեր	Թռչուններ	Ոչ թռչնային տեսակներ
Ալպիական	60	82	40
Անատոլիական	51	99	33
ԸՆԴԱՄԵՆԸ	111	108	73

*Բեռնի Կոնվենցիայի 4-րդ և 6-րդ Բանաձևերում նշված տեսակները և բնական միջավայրերը
Աղբյուրը՝ *Country Emerald Reference Lists*. <https://www.coe.int/en/web/bern-convention/conclusions-of-the-biogeographical-seminars>.

«Էմերալդ ցանցում» ներառվելու համար երկրները նախ առանձնացնում են, թե ո՞ր բնական միջավայրերը և տեսակներն են իրենց տարածքում պահպանվում Բեռնի կոնվենցիայի շրջանակում, ապա առաջարկում համապատասխան վայրեր, որոնք կարող են ապահովել նման տեսակների և բնական միջավայրերի գոյատևումը: Բեռնի կոնվենցիայի քարտուղարությունը գնահատում է առաջարկվող տարածքները և չափանիշներին համապատասխանող վայրերին «Էմերալդ վայրի պաշտոնապես առաջադրված թեկնածուի» կարգավիճակ շնորհում:

Հաշվի առնելով, որ մասնակից բոլոր երկրների շարքում հատուկ պահպանվող վայրերի իր ազգային ծածկույթն ամենաբարձրն է, Հայաստանը «Էմերալդ ցանցին» առավել համապատասխանող վայրերի նույնականացման հարցում ակնառու առաջընթաց է գրանցել: Եվրոպայի խորհրդի կողմից մշակված՝ «[Էմերալդ ցանցի դիտման](#)» գործիքը այս ցանցի առաջարկված թեկնածուներին և ընդունված վայրերը տեղորոշում և պատկերում է և առանձնացնում դրանց շրջանակում պահպանության ենթակա տեսակները և բնական միջավայրերը:

«[Էմերալդ ցանցի ապահովումն](#)» օգնում է հետևել առաջընթացին և որոշել Բեռնի կոնվենցիայի շրջանակում պահպանվող տեսակների և բնական միջավայրերի երկրարածամկետ պահպանության ուղղությամբ յուրաքանչյուր անդամ երկրի առաջնահերթությունները: Հայաստանը ապահովման փոքրաթիվ խնդիրներ ունի լուծելու, որոնք հիմնականում կապված են «Էմերալդ ցանցի» տվյալների շտեմարանի թարմացման և որոշակի տեսակների և բնական միջավայրերի համար լրացուցիչ հետազոտությունների կատարման հետ:

Թեև որոշ վայրերի սահմանների լրացուցիչ հաստատում է պահանջվում, պահպանման առավել նպատակահարմար կարգավիճակ ապահովելու համար, ապագա առաջնահերթությունը տրվում է վայրի կառավարման պլանների մշակմանը և բոլոր վայրերում պահպանության համապատասխան միջոցառումների ներդրմանը:

«ԷՄԵՐԱԼԴ ՑԱՆՑԻ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Աղբյուրները՝ ԵՏԳ «Էմերալդ ցանցի» բարոմետր (նախագծային տարբերակ) 2021 թ. վերջ

Էմերալդ վայրերի բոլոր տեսակների քանակը	23
Էմերալդ վայրերի բոլոր տեսակների մակերեսը (կմ2)	10826.2
Էմերալդ վայրերի բոլոր տեսակների ազգային ծածկույթը (%)	36.4
Տեսակների և բնական միջավայրերի համամասնությունը, որոնց Ցանցի ապահովումը բավարար է (%)	68.7
Կառավարման պլան ունեցող բոլոր Էմերալդ վայրերի համամասնությունը (%)	13.0

Իրական աշխատանքը սկսվում է տարածքը թեկնածու Էմերալդ վայր նշելու պահից: Ազգային կառավարությունների առջև դրվում է տարածքի կառավարման պլանների և միջոցառումների մշակման և իրականացման խնդիր՝ վայրերում վայրի բնության և բնական միջավայրի արդյունավետ պահպանությունն ապահովելու համար: Այս նպատակով Համաշխարհային բանկը Հայաստանի կառավարությանը կաջակցի Էմերալդ վայրերի կառավարման մեթոդաբանության, ինչպես նաև «Էմերալդ ցանցի» համար ազգային գործողությունների ծրագրի մշակման հարցում՝ պահպանության նպատակները և դրանց իրագործման ժամկետը սահմանելու համար: Պահպանության միջոցառումների արդյունավետ իրականացումն ապահովելու համար ծրագրով նաև տեխնիկական աջակցություն կցուցաբերվի կառավարման փորձնական պլանների մշակման և շահակիցների մոտ դրանց իրականացման կարողությունների ստեղծման ուղղությամբ:

Ի լրումն բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման, «Էմերալդ ցանցի» մաս կազմելը նաև Հայաստանին օգնում է ԵՄ բնապահպանական չափանիշներին անցնելու հարցում: Սա երկրի՝ բնության կարևոր տարածքների ավելի կայուն կառավարման գործելակերպի ներդաշնակեցմանն ուղղված էական քայլ է:

Երկրի կենսաբազմազանությունը և էկոհամակարգերը բարելավելու նպատակով հատուկ պահպանվող տարածքներն առանձնացնելուց գատ, ՀՀ կառավարությունն աշխատում է այս վայրերի համայնքներում կայուն տնտեսական գործունեության ապահովման, աշխատատեղերի ստեղծման և ապրուստի միջոցների պահպանման ուղղությամբ: Այս նպատակով «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրը կխթանի «Էմերալդ ցանցի» վայրերում էկոտուրիզմի զարգացումը և ոչ բնափայտային արդյունքի արտադրությունը: Ծրագրով կուսումնասիրվեն կայուն տնտեսական գործունեության ներուժը, առաջարկություններ և շուկայահանման ռազմավարություն կմշակվի և աշխատանք կտարվի տեղական համայնքների հետ՝ այս աշխատանքների մեկնարկի համար հմտություններ ապահովելու համար:

Հայաստանը ու իր հարուստ կենսաբազմազանությունը մեծապես կշահեն հատուկ պահպանվող տարածքների «Էմերալդ ցանցին» անդամակցելուց: Համաշխարհային բանկի օժանդակությամբ երկիրն ունի կենսաբազմազանության պահպանության հարցում տարածաշրջանի առաջամարտիկը դառնալու և իր ժողովրդի համար ավելի կանաչ ու դիմակայուն ապագա ապահովելու ներուժ:



«Նոր Վիրապ-Արմաշ» Էմերալդ վայր. վայրը դեռ պետության կողմից հատուկ պահպանվող կարգավիճակ չունի: Լուսանկարը՝ Կարեն Աղաբաբյանի